ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ 1867 Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին Ռուսաստանը բռնեց կապիտալիզմի զարգացման ուղին. դա առաջ բերեց երկրի վարչադատական և ոստիկանական կառույցի վերակառուցման ու նոր պայմաններին հարմարեցման պահանջներ ինչպես կենտրոնական շրջաններում, այնպես էլ ծայրամասերում, այդ թվում՝ Այսրկովկասում, որի բաղկացուցիչ մասն էր Արևելյան Հայաստանը: 1862 թ. Կովկասի փոխարքայի պաշտոնում Ա. Ի. Բարյատինսկուն փոխարինած մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովը ձեռնամուխ եղավ վարչական կառույցի բարեփոխմանը: 1865 թ. ստեղծված Հատուկ կոմիտեն վարչական հաստատությունների բոլոր կանոնադրությունների և հաստիքների վերանայման համար նախապատրաստեց նախագծեր, որոնք մարմնավորվեցին Ալեքսանդր II-ի 1867 թ. դեկտեմբերի 9-ի «Կովկասյան և Այսրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» հրամանագրի մեջ[1]:

Այսրկովկասի 1867 թ. վարչական բարեփոխման լուսաբանման ու գնահատման խնդիրը պատմագիտության մեջ դեռևս հետազոտված չէ: Ուսումնասիրված չէ պատմաբանների վերաբերմունքը բարեփոխման էության և նպատակների նկատմամբ: Մենք կփորձենք ներկայացնել այս խնդրին վերաբերող մինչհոկտեմբերյան ու հետհոկտեմբերյան՝ հիմնականում հայ և ռուս պատմագիտության ներկայացուցիչների տեսակետները:

Ցարական աստիճանավոր Ա. Մ. Ֆադեևը, որը 1846–1867 թթ. եղել է Այսրկովկասի Գլխավոր վարչության խորհրդի անդամ և պետական գույքի հիմնարկաբաժնի կառավարիչ, գովեստով է խոսում բարեփոխման նախապատրաստման մասին: Մասնավորապես ասում է. «Լավ է արվել այն, որ բարեփոխումը նախատեսված է անցկացնել … ներքևից վերև, այսինքն՝ նախ գյուղական և գավառային վարչությունների մասին կանոնադրություն, իսկ հետո արդեն վերևում»[2]: Բայց Ֆադեևն այն հաստատ համոզմունքին է, որ գործի հաջողությունը պայմանավորված է միմիայն աստիճանավորների ամենաուշադիր ընտրությամբ[3]: Համարում է, որ բարեփոխումների նախագծերը, ըստ երևույթին, նպատակ ունեին հաստատել Գլխավոր վարչությունում նույն այն սկզբունքները, ինչպիսիք հաստատվել են կայսրությունում ընդհանրապես: Ֆադեևը, քննելով դրանց օգտակարությունը, ասում է. «…կարող է պատահել,

---

[1] Полное собрание законов Российской империи. Собрание 2-е, т. 42, СПб., 1871, ст. 45260.

[2] Воспоминания А. М. Фадеева. – "Русский Архив", 1891, кн. 3, вып. 9–12, с. 516.

[3] *Նույն տեղում, էջ 516–517:*

որ այս նպատակով դրանք լինեն օգտակար, բայց էական օգուտ երկրամասի համար, թերևս, կբերեն նույնքան քիչ, որքան և նախկինները, բացառությամբ այն դեպքի, եթե գոնե մի քիչ կրճատեն (Գլխավոր վարչության – Ա. Հ.) ծախսերը, ինչում կասկածում եմ»[4]*: Գտնելով, որ իրական օգուտ Այսրկովկասի համար կլիներ միայն այն ժամանակ, երբ սկսեին առավել ուշադրություն դարձնել և պահանջկոտություն ցուցաբերել աշխատողների անձնական հատկանիշներին, նա ևս մի կարևոր հետևություն է անում. «Այդ կարգի պահպանման պակասությունն էր պատճառը երկրամասում թե՛ նախկինում, թե՛ այժմ շարունակվող անկարգությունների, որոնք դժվար թե չվերացնեին ժողովրդի մեջ ամեն տեսակ վստահություն և հարգանք կառավարության նկատմամբ»*[5]*:*

Պաշտոնական դիրքորոշումն արտահայտող փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի կայսերն ուղղված հաշվետվության մեջ բարեփոխման անհրաժեշտությունը պատճառաբանվում է նրանով, որ «երկրամասում, որում Ռուսաստանը կոչված է լինելու լուսավորյալ քաղաքացիականության տարածող, կառավարման միջոցները վաղուց չէին համապատասխանում նրա պահանջներին և քաղաքացիականության ուղիով առաջ շարժվող բնակչության ամեն օր աճող կարիքներին»[6]*: Բարեփոխման պատճառներից էին նաև մի կողմից միատեսակ հաստատությունների կանոնադրությունների միջև անհամապատասխանությունը, մյուս կողմից՝ դրանց միջև դրամական միջոցների անհավասարաչափ բաշխումը, մանավանդ նահանգային և գավառային ոստիկանական հիմնարկների գործունեության անբավարարությունը*[7]*:*

Ցարական կառավարության կարծիքով՝ նախորդ փոխարքա Ա. Ի. Բարյատինսկու կողմից ստեղծած վարչական կառույցը տառապում էր երկու էական թերություններով. այն շատ ծախսատար էր և բարդ[8]*: Բայց այս պատճառաբանությունը, թերևս, կովկասյան վարչության ինքնուրույնությունը սահմանափակելու պաշտոնական առիթ էր: 1858 թ. դեկտեմբերի 21-ի կանոնադրությամբ՝ կառավարչական կառույցը դարձել էր բազմաճյուղ: Դա համարվել էր փորձ, որը հետագայում ճանաչվել էր անհաջող*[9]*:*

Գլխավոր վարչության մասին կանոնադրության նոր նախագիծն առավելապես նկատի ուներ հնարավորինս կրճատել դրա ծախսերը, համակենտրոնացնել գործերը, փոխարքայի խորհուրդը, ինչպես նաև առանձին մասերի վարչությունները մտցնել Գլխավոր վարչության կազմի մեջ և դրանով կրճա-

---

[4] *Նույն տեղում, էջ 519:*

[5] *Նույն տեղում:*

[6] Отчет по Главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862– 6 декабря 1872 гг. (*այսուհետև՝* Отчет …), Тифлис, 1873, с. 34–35.

[7] *Նույն տեղում, էջ* 43:

[8] *Նույն տեղում, էջ 45:*

[9] В. Н. И в а н е н к о. Гражданское управление Закавказьем. Тифлис, 1901, с. 433–436.

տել ողջ «անպտուղ և դանդաղեցնող գրագրությունը»[10]: Իսկ նահանգային և գավառառստիկանական հաստատությունների կազմակերպման բարելավումը, վերը բացատրված թերություններով հանդերձ, անհրաժեշտ էր նաև դատական բարեփոխման ներդրմամբ[11]: Այսրկովկասի նահանգներում գավառային կառավարմանը «միանձնյա բնույթ» տալը ներկայացվում է որպես «ծայր աստիճան անհրաժեշտ՝ տարացեղ և մեծ մասամբ դեռ բավական վայրենի ու քմահաճ բնակիչներով բնակեցված երկրամասում ոստիկանության վճռական գործողությունների դիմելու համար»[12]:

Գրող, տնտեսագետ Ս. Եղիազարովը իր «Անդրկովկասի հաստատությունների պատմության հետազոտություն» աշխատության մեջ, ուր հարցերը քննված են իրավական տեսանկյունից, 60-ական թվականների բարեփոխումների առնչությամբ կարևոր հետևություն է անում. «Համայնքային միության ձևերից յուրաքանչյուրը մշակում էր իր ներքին կարգուկանոնը, ստեղծում իր մարմինները, որոնցով կառավարվում են մինչև այժմ, այնպես որ 60-ական թվականների բարեփոխումը քիչ ազդեց կառավարման հին մարմինների իրավունքների և պարտականությունների վրա»[13]:

Հետաքրքիր է պատմաբան Ս. Էսաձեի տեսակետը: Նա, գնահատելով 1867 թ. վարչական բարեփոխման մասին կանոնադրությունը, ներկայացնում է Կովկասի փոխարքային և Գլխավոր վարչությանը օրենքով տրված լիազորությունների շրջանակները ու գրեթե ոչինչ չի ասում փաստական դրության, վարչական մարմինների գործելակերպի մասին: Ըստ Էսաձեի՝ բարեփոխման նպատակն էր կովկասյան փոխարքայության մեջ կայսրության հետ հնարավորինս «նույնատեսակ հաստատությունների ազդեցության տարածումը»[14]: Նոր կանոնադրությամբ փոխարքային վերաբերող կովկասյան և այսրկովկասյան երկրամասի կառավարման գերագույն հսկողությունը վերապահվեց Գլխավոր վարչությանը[15]: Սակայն պարզվեց, որ կովկասյան վարչությունը, հասնելով կենտրոնական վարչությունը պահելու ծախսերի որոշ կրճատման, հարկադրված էր ավելացնել նահանգային և գավառային հաստատությունների ծախսերը: Ընդհանուր արդյունքում վարչական և դատական հաստատությունների նոր հաստիքները, մինչև 1867 թ. գոյություն ունեցած դրույքաչափերի համեմատությամբ, ծախսերը մեծացրին չափից ավելի՝ 444 000 ռուբլով[16]:

Կովկասյան վարչության բարեփոխական գործունեությունն ընդհանուր գծերով լուսաբանված է մինչհոկտեմբերյան լիբերալ ուղղության ներկայա-

---

[10] Отчет …, с. 46–47; С. Э с а д з е. Историческая записка об управлении Кавказом. Т. 2, Тифлис, 1907, с. 42.

[11] Отчет …, с. 49.

[12] *Նույն տեղում, էջ 52:*

[13] С. Е г и а з а р о в. Исследования по истории учреждений в Закавказье. Ч. 1, Казань, 1889, с. II.

[14] С. Э с а д з е. *Նշվ. աշխ., էջ 42:*

[15] *Նույն տեղում, էջ 43:*

[16] *Նույն տեղում, էջ 47:*

ցուցիչ Գ. Գ. Եվանգուլովի գրքույկում, ուր հեղինակը ուշադրությունը սևեռել է կառավարման ցածրագույն մարմինների (տեղամասային և գյուղական կառավարման) վրա: Նա կարծում էր, որ Կովկասում բարեփոխումը պարտադրված էր Ալեքսանդր II կայսեր Դատական կանոնադրությունների ազդեցության տարածմամբ և գյուղացիական ու նրա հետ կապված գյուղական ինքնավարության բարեփոխության ներմուծմամբ և բնակչությանը մերձկառավարական իշխանության նոր սկզբունքներով վերակառուցելու անհրաժեշտությամբ[17]*: Սակայն այդ խնդրի լուծումը վեր էր փոխարքա Միխայիլ Նիկոլանիչի վարչության ուժերից. «Սովորաբար ընդունված է համարել, որ Ալեքսանդր II-ի թագավորության ժամանակվա բարեփոխումներն ամբողջական չէին, քանի որ դրանց կառույցը կանոնակարգված չէր սահմանադրությամբ … և, ըստ էության, առանց հիմքի էր»*[18]*:*

Ինչպես գիտենք, Կովկասում տեղական կառավարումը 1840 թ. օրենքով եռաստիճան էր. տեղամաս՝ տեղամասային ատենակալ, գավառ՝ գավառապետ, նահանգ՝ նահանգապետ: Նշելով, որ մինչ բարեփոխումը եղած տեղամասային ատենակալներն իրենց նախկին կարգավիճակով չէին կարող արդեն գոյություն ունենալ, Եվանգուլովը ընդգծում է 1867 թ. բարեփոխման ոչ ճիշտ իրականացումը. 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով տեղամասային ատենակալի հաստիքը վերացավ, գավառների թիվը 18-ից հասավ 29-ի[19]*: Կարելի է պատկերացնել, թե աստիճանավորների քանակի ինչպիսի ուռճացման դա կհանգեցներ: Այստեղ անում է հետևություն. «Բայց, չէ՞ որ, եթե նույնիսկ գավառների թիվը հասցված լիներ տեղամասերի թվին, ոչ միայն անվանակոչման խնդիր կառաջանար: Նահանգապետին դժվար կլիներ անմիջականորեն կառավարել գավառների վերանվանված չափազանց մեծ թվով տեղամասերը, ուստի և անհրաժեշտ էր ստեղծել միջանկյալ ղեկավար ատյան, այլ կերպ ասած՝ վերադառնալ տեղական կառավարման եռաստիճան կառուցվածքին»*[20]*: Նա ցավով նկատում է, որ «գավառային կառավարման մեջ ամբողջ տեղական վարչական իշխանության կենտրոնացման անհարմարությունը շատ շուտ ի հայտ եկավ»*[21]*, իսկ 1873 թ. օրենքը՝ Գլխավոր, նահանգային և գավառային վարչությունների մասին, հանդիսացավ միայն 1867 թ. օրենքի հետագա զարգացում*[22]*: Այսպիսով՝ 1867 թ. բարեփոխման գնահատման հարցում հեղինակն արտահայտում է բացասական կարծիք, հակառակ 1840 թ. բարեփոխման մասին ունեցածի:*

Ռուսաստանի կառավարման ներքին կառուցվածքի գործունեության բնութագիրը տվել է XIX դ. պետական գործիչ Պ. Ա. Վալուևը: 1869 թ. նա իր օրագրում գրառել է. «Կազմակերպված, այսինքն՝ օրգանապես գործող կառավարություն, բառիս ստույգ իմաստով մեզ մոտ չկա: … Ո՛չ արտաքին համերաշ-

---

[17] Г. Г. Е в а н г у л о в. Местная реформа на Кавказе. СПб., 1914, с. 17–18.

[18] *Նույն տեղում, էջ 18:*

[19] *Նույն տեղում, էջ 17–18:*

[20] *Նույն տեղում, էջ 19–20:*

[21] *Նույն տեղում, էջ 19:*

[22] *Նույն տեղում, էջ 20:*

խություն, ո՛չ ներքին համաձայնություն տարբեր կառավարական մասերի միջև գոյություն չունի: Միասնականության գաղափարը կենտրոնացված է բացառապես ի դեմս ինքնակալի: Բայց կառավարության գործունեությունը շարունակական է այն ժամանակ, երբ դրա՝ ինքնակալին վերաբերող գերակշռող մասը կարող է դրսևորվել միայն մասնակիորեն»[23]: Վալուևը կառավարության կազմակերպման ներքին կառուցվածքը դիպուկ անվանել է «նախարարական խմբիշխանություն»[24]:

Այսրկովկասում ցարիզմի նոր քաղաքականությանը համապատասխան՝ հետագա փոփոխությունների ենթարկվեց նաև վարչատարածքային կառուցվածքը: Երևանի, Թիֆլիսի, Քութայիսի նահանգները պահպանվել էին, սակայն Շամախիի նահանգը փոխվել էր ու վերանվանվել Բաքվի նահանգ և, բացի այդ, Այսրկովկասի մեջ էր մտել նաև Դաղստանի մարզը: 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով Այսրկովկասի վերոհիշյալ նահանգներին ավելացավ մի նոր նահանգ ևս՝ Ելիսավետպոլի նահանգը, որը կազմավորվեց Թիֆլիսի նահանգի՝ Ելիսավետպոլ, Բաքվի նահանգի՝ Նուխի և Շուշի գավառների, Երևանի նահանգի՝ Օրդուբադի գավառի Մեղրիի տեղամասի միացմամբ[25]:

Կովկասի փոխարքա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի հաշվետվության մեջ Այսրկովկասի վարչատարածքային նոր բաժանման և 5-րդ նահանգի կազմավորման անհրաժեշտությունը հիմնավորված է երկրամասի նախկին բաժանման՝ կանոնավոր և գործուն վարչության պահանջներին անհամապատասխանությամբ: Հիշատակված նահանգներից՝ Թիֆլիսի և հատկապես Բաքվի նահանգները չափազանց մեծ էին ինչպես տարածքային (58000 քառ. վերստ. 1 վերստ.=1,06 կմ), այնպես էլ բնակչության թվի (900000 հոգի) տեսակետից, որ նահանգային իշխանությունը կարողանար ամենուրեք գործել պատշաճ հաջողությամբ: Նահանգային քաղաքների գավառայիններից ունեցած հեռավորության պատճառով (Շուշին՝ 400 վերստ, Նուխին՝ 325, Ելիսավետպոլը՝ 200) նահանգային վարչության անմիջական հսկողությունը դժվար էր, իսկ բնակչության մահմեդական մասի ավազակությունների ու կողոպուտների նկատմամբ հակվածության, մոլեռանդության և հոգևորականության ազդեցության պայմաններում գավառապետերի իշխանությունը անբավարար էր: «Առանձին խանությունների նախկինում ինքնավարությունից առաջ եկած այս, և այլ պատճառներ որոշ չափով խոչընդոտում էին երկրամասի այդ տարածքների լիակատար միավորմանը մեկ անբաժանելի ամբողջության մեջ»[26]: Այսպիսով, ըստ Մ. Նիկոլաևիչի, վարչատարածքային նոր բաժանման նպատակն էր գավառային վարչության խիստ սահմանափակ իշխանության փոխարեն, նահանգապետերի ուղղակի ազդեցությունից և հսկողությունից հեռու մասերում գործնականում ավելի ընդունակ նահանգային իշխանության ստեղծումը[27]:

---

[23] Дневник П. А. Валуева–министра внутренних дел. Т. 2, М., 1961, с. 438–439.

[24] *Նույն տեղում, հ. 1, էջ 100:*

[25] Отчет …, с. 50.

[26] *Նույն տեղում, էջ 49:*

[27] *Նույն տեղում, էջ 50:*

Վիճակագիր և ազգագրագետ Ն. Կ. Զեյդլիցը, որը 1868 թ. նշանակվել էր կովկասյան վիճակագրական կոմիտեի գլխավոր խմբագիր, նոր նահանգի հիմնումը նույնպես պատճառաբանում է թաթար բնակիչներով հսկայական տարածության բնակեցվածությամբ և նրա համար ավելի ուժեղացված ոստիկանական հսկողության անհրաժեշտությամբ[28]:

Ինչպես նշվեց, 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով նախատեսվում էր տեղամասերի վերացում և գավառների ապախտորոշում, ընդ որում գավառի տարածքը հնարավորինս չպիտի գերազանցեր 6 500 քառ. վերստը, իսկ ազգաբնակչությունը՝ 10 000 ծուխը կամ 80 000 հոգին[29]: Թիֆլիսի և Բաքվի նահանգները բաժանվեցին 6-ական, իսկ Երևանի, Ելիսավետպոլի և Քութայիսի նահանգները՝ 5-ական գավառների:

Փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի հաշվետվության մեջ գավառների նոր բաժանման անհրաժեշտությունը բացատրվում է հետևյալ պատճառներով՝ որոշ գավառների անհամաչափ տարածությամբ (օրինակ Շուշիինը՝ 20 000 քառ. վերստ, 254 000 բնակիչ, Ելիսավետպոլինը՝ 13 000 քառ. վերստ, 111 000 բնակիչ և Նուխիինը՝ 6 500 քառ. վերստ, 127 000 բնակիչ) և հատկապես երկրամասի ոստիկանական աչալուրջ հսկողություն պահանջող մահմեդականներով բնակեցված մասերում եղած չափազանց մեծ անհարմարություններով[30]:

Նկատի ունենալով Այսրկովկասում և Կովկասի լեռներում տեղանքի խիստ կտրտվածությամբ ու պատմական իրադարձությունների ընթացքում ձևավորված անկախ տիրույթներից ու գյուղական համայքների միություններից կազմավորված գավառների և օկրուգների միջև եղած ինչպես տարածության մեծության, այնպես էլ բնակչության թվի մեծ անհամաչափությունը՝ Ն. Կ. Զեյդլիցը որոշ գավառների տարածքների փոքրացման անհրաժեշտությունը հիմնավորում է վերջին ժամանակների դատական և վարչական բարեփոխումներով, տեղամասային ատենակալների ստորին վարչական ատյանի վերացմամբ: Բայց նոր գավառները և օկրուգները, այնուամենայնիվ, ներկայացնում են մեծ բազմազանություն իրենց զբաղեցրած տարածության մեծությամբ և բնակչության թվաքանակով, քանզի «միայն տարածության մեծությունը չի կարող ծառայել հիմնավորում գավառների սահմանազատման համար»[31]: Այսպիսով, ընդունելով որոշ գավառների տարածքների փոքրացման անհրաժեշտությունը, Ն. Կ. Զեյդլիցն իրավացիորեն նկատում է, որ բարեփոխումն այդպես էլ չվերացրեց գավառների տարածության մեծության և բնակչության թվի խիստ անհամաչափությունը:

Անվանի իրավաբան Ա. Դ. Գրադովսկին, որը մեծ հաջողությամբ միավորում է պատմական և դոգմատիկ (կրոնական) եղանակները պետական կյան-

---

[28] Н. К. З е й д л и ц. Административные отделы Кавказского края.– Известия Кавказского отдела Русского географического общества. Т. 5, ¹ 2, 1877, с. 108.

[29] Отчет …, с. 50.

[30] *Նույն տեղում:*

[31] Н. К. З е й д л и ц. *Նշվ. աշխ., էջ 109:*

քի բոլոր գլխավոր հարցերը լուսաբանելիս, նշելով Ֆրանսիայում վարչական բաժանման արհեստական լինելը, գրում է, որ Ռուսաստանում վարչական բաժանումը նույնպես արհեստական է. «Մեր նահանգները և նույնիսկ մեր գավառները (եթե հաշվի առնենք, որ դրանց սահմանները) նոր և զուտ արհեստական ծագում ունեն, ուստի շատ ժամանակ էր պետք, մինչև առաջ գային որոշ ընդհանուր հետաքրքրություններ և պահանջմունք՝ նահանգներում ու գավառներում հասարակական հաստատությունների ստեղծման համար»[32]: Դժվար է չհամաձայնվել այս տեսակետին:

Այսրկովկասի վարչական վերաբաժանումներն ուսումնասիրող Ա. Շահխաթունյանը ևս անդրադառնում է վարչական փոփոխությունների հետևանքներին և դրա պատճառներին. «Երկու նահանգներն էլ (Բաքվի և Ելիսավետպոլի – Ա. Հ.) բարդ էին և՛ աշխարհագրական, և՛ ազգագրական տեսանկյուններից: Երկու նահանգներում էլ մտնում էին և՛ լեռնային, և՛ դաշտային մասեր: Դրանք բնակեցնում էին և՛ հայ, և՛ թաթար ազգություններ՝ հայերի համար ամենաանբարենպաստ համամասնությամբ»[33]: Ավելին՝ փոփոխությունները հանգեցրին նրան, որ հայերի և թաթարների տոկոսային հարաբերակցությունը մի շարք վայրերում թեև փոքր-ինչ փոխվեց, սակայն՝ «ի վնաս հայերի», քանզի «տեղական իշխանությունը միանգամայն չէր հետաքրքրվում տնտեսական և ազգային հարցերով: Նրա համար նշանակություն ուներ միայն վարչական միավորի չափերի մասին հարցը և մտահոգված չէր ներքուստ միասնական որևիցե բանի ստեղծմամբ: Դա երևում էր նրանից, որ այդպես անհաջող ստեղծված Ելիսավետպոլի նահանգը նույնիսկ բաժանված չէր գավառների, վերը նշված իրական պայմաններին համապատասխան»[34]:

Այժմ անդրադառնանք հետհոկտեմբերյան շրջանի պատմաբանների տեսակետներին:

Այսրկովկասում ցարիզմի նոր քաղաքականությանը համապատասխան կատարված վարչատարածքային կառուցվածքի փոփոխությունները Ա. Շ. Միլմանը պայմանավորում էր գլխավորապես վարչաստիկանական հսկողությունն ուժեղացնելու շահագրգռությամբ՝ ընդդեմ տաժանելի շահագործման ու հարստահարման պայմաններում բանվոր դասակարգի և գյուղացիության ծավալվող պայքարի[35]: Նշելով, որ Ելիսավետպոլի նահանգի կազմավորումից հետո էլ ադրբեջանական, ինչպես նաև հայկական մի շարք հողեր շարունակվում էին գտնվել մասնատված վիճակում Այսրկովկասի տարբեր նահանգների մեջ, նա եզրակացնում է, որ «այդ հանգամանքը պատահական չէր և արտացոլում էր ցարիզմի՝ ազգամիջյան թշնամությունների և գժտությունների դիտավորյալ տարածման ու հրահրման քաղաքական ուղե-

---

[32] А. Д. Г р а д о в с к и й. Собрание сочинений. Т. 9, ч. 3, СПб., 1908, с. 12.

[33] А. Ш а х а т у н я н. Административный передел Закавказского края. Тифлис, 1918, с. 93.

[34] *Նույն տեղում, էջ 93–94:*

[35] А. Ш. М и л ь м а н. Политический строй Азербайджана в XIX – начале XX века. Баку, 1966, с. 156.

գիծը»[36]: Միլմանը կարծում է, որ նոր «կանոնադրությունը» զգալիորեն բարձրացրեց Գլխավոր վարչության պետի դերը՝ որպես երկրամասի քաղաքացիական կառավարման փոխարքայի ամենամոտ օգնականի, ընդլայնեց Գլխավոր վարչության խորհրդի իրավունքները՝ որպես խորհրդակցական մարմնի, փոքր-ինչ պարզեցրեց կովկասյան վարչության համակարգը[37]: Սակայն, ինչպես նկատում է Ն. Պ. Երոշկինը, «1867 թ. բարեփոխումը դիպավ Կովկասի միայն գերագույն կառավարմանը: Փոխարքայության նահանգներում, քաղաքներում և գավառներում շարունակում էին գոյություն ունենալ մինչ բարեփոխումը եղած շատ հաստատություններ»[38]: Երոշկինի այս միտքը որոշ նմանություն ունի Եղիազարովի վերը նշված տեսակետին:

Իսմայիլ - Զադեն 1867 թ. հրամանագիրը ներկայացնում է որպես կովկասյան երկրամասի տնտեսական և վարչաքաղաքական կառավարման բոլոր կողմերի «համընդհանուր վերակառուցում»[39], որի հիմնարար դրույթներից յուրաքանչյուրն ինքնուրույն օրենսդրական վավերագիր է: Կառավարման համակարգի պարզեցման հետ կատարվեցին նրա վարչաքաղաքական արտոնությունների որոշ սահմանափակումներ: Սակայն հետագայում փոխարքայի ազդեցությունը քաղաքացիական կառավարման վրա դարձյալ ուժեղացավ. «ամեն ինչ դարձավ ի շրջանս յուր, սակայն կարճ ժամանակով»[40]:

Ռուսաստանում կառավարման ներքին կառուցվածքի կարևորագույն առանձնահատկությունը, ըստ Լ. Ե. Շեպելևի, այն էր, որ «ընդհանրապես համաձայնեցված չէր և ոչ մի գերատեսչության գործունեություն»[41]:

Ա. Ս. Համբարյանը կարծում է, որ ցարական կառավարությունը Ռուսաստանի ազգային շրջաններում հաստատել էր վարչական այնպիսի բաժանում ու կառավարում, որոնք «հեշտացնում էին տեղական ժողովուրդների սոցիալական հարստահարումը և խոչընդոտում նրանց ազգային ազատագրական շարժումների ծավալմանը»[42]:

Այսրկովկասում ցարական կառավարության կողմից անցկացված վարչատարածքային նման բաժանումների հիմնական նպատակը Գ. Գ. Սարգսյանը տեսնում է տեղերում վարչական և դատական մարմինների առավել արդյունավետ գործելն ապահովելու մեջ[43]: Միևնույն ժամանակ այդպիսի մասնակի փոփոխությունները, Արևելյան Հայաստանի տարբեր մասերի անցնելը որոշ նահանգներից և գավառներից մյուսներին, որտեղ կային բնակչության ազգային կազմի տարբեր հարաբերակցություններ՝ բացասաբար էին ազդում

---

[36] *Նույն տեղում:*

[37] *Նույն տեղում, էջ 152, հմմտ.* Д. И. И с м а и л - З а д е. Население городов Закавказского края в XIX – нач. XX в. М., 1991, с. 187.

[38] Н. П. Е р о ш к и н. История государственных учреждений дореволюционной России. М., 1983, с. 246.

[39] И. Д. И с м а и л - З а д е. *Նշվ. աշխ., էջ 187:*

[40] ***Նույն տեղում:***

[41] Л. Е. Ш е п е л е в. Царизм и буржуазия в XIX в. Л., 1991, с. 13.

[42] *Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 15:*

[43] Г. Г. С а р к и с я н. Население Восточной Армении в XIX–начале XX вв. Ереван, 2002, с. 100.

Արևելյան Հայաստանի շրջանների բնակչության ազգային կազմի կայունացման գործընթացի վրա[44]:

Թեև Երևանի ու Էլիսավետպոլի նահանգների կազմավորումը և վարչատարածքային այլ միավորների ստեղծումը Արևելյան Հայաստանի տարածքում քայլ էին առաջ, որն իրականում պետք է դրական դեր խաղար արևելահայերի համախմբման գործում, սակայն դա չհանգեցրեց արևելահայկական հողերի միավորմանը քաղաքական վարչական առումով միասնական ամբողջության մեջ. Արևելյան Հայաստանի տարածքը շարունակում էր մնալ մասնատված:

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ ինչպես մինչհոկտեմբերյան, այնպես էլ հետհոկտեմբերյան հայ և ռուս պատմագիտությունը, հիմնավորում է 1867 թ. բարեփոխման անհրաժեշտությունը, սակայն, ընդհանուր առմամբ, բացասական է գնահատում բարեփոխման արդյունքները: Նոր «կանոնադրությունը» փոքր-ինչ պարզեցրեց կովկասյան վարչության համակարգը, փոխարքայի ազդեցությունը քաղաքացիական կառավարման վրա թուլացավ, սակայն բարեփոխումն անտեսում էր երկրամասի ժողովուրդների քաղաքացիության կարգավիճակը և ազգային առանձնահատկությունները, ինչը պայմանավորեց նրա սահմանափակ առաջադիմական բնույթը: Վարչատարածքային փոփոխությունների արդյունքում անդամահատվեցին Այսրկովկասի ժողովուրդների, հատկապես հայերի ազգային տարածքները:

ОСВЕЩЕНИЕ И ОЦЕНКА АДМИНИСТРАТИВНОЙ РЕФОРМЫ 1867 Г. В ЗАКАВКАЗЬЕ В ИСТОРИОГРАФИИ

АРАМ АКОПЯН

Р е з ю м е

Проблема освещения и оценки управленческой реформы 1867 г. в Закавказье является предметом различных толкований. Несмотря на то, что во многих исследованиях недооценивается значение реформы как акта, который немного упростил систему кавказского управления, ослабил влияние наместника на гражданское управление, в большинстве взгляды исследователей в основном одинаковы. Обосновывая необходимость реформы, они в общем отрицательно оценили ее результаты. Реформа была актом ограничения кавказского управления, однако игнорировала степень гражданского самосознания и национальные особенности народов Закавказья, что обусловило ее ограниченный прогрессивный характер. В результате административно-территориальных изменений были раздроблены этнические территории закавказских народов, особенно армянского народа.

[44] *Նույն տեղում:*

ILLUMINATION AND EVALUTION OF THE 1867 TRANSCAUCASIAN ADMINISTRATIVE REFORM IN HISTORIOGRAPHY

ARAM HAKOBYAN

S u m m a r y

The problem of illumination and evaluation of the 1867 administrative reform has been the subject of different interpretations. Despite the fact that a good deal of opinions reflect the underestimation of the reform's importance – as a measure which considerably simplified the system of Caucasian administration, as well as weakened the influence of the local governor, in general, most of the authors agree with each other. More particularly, trying to justify the necessity of the reform, the authors, on the whole, evaluated it as a negative phenomenon. The reform limited the frames of the Caucasian administration; however it ignored the civil interests and national peculiarities of the peoples living in the Transcaucasus, a factor, which restricted the reform's progressive character. As a result of administrative and territorial transformations, Transcaucasian peoples, especially Armenians, had to witness partition of their ethnic territories.